600.0185.29.05.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2019 թվականի №185Ա
քաղ. Երևան

«ԳԱՅՈՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ №9/1-25 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի №467Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ԳԱՅՈՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2003 թվականի դեկտեմբերի 22-ին «ԳԱՅՈՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականությունների հատկացման №9/1-25 թույլտվությունը, որը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2010 թվականի սեպտեմբերի 1-ի №467Ա որոշմամբ երկարաձգվել և շարադրվել է նոր խմբագրությամբ (ռադիոհաճախականության օգտագործման №0837 թույլտվություն),

բ) ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի №761Ա որոշմամբ ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 26-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների

մասով հաշվարկված 322 607 (երեք հարյուր քսաներկու հազար վեց հարյուր յոթ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) ընկերությունը 2019 թվականի մայիսի 8-ի գրությամբ դիմել է հանձնաժողով՝ ընկերությանը տրամադրված թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

ե) ընկերության՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը 2018 թվականի դեկտեմբերի 27-ից մինչև 2019 թվականի մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածի համար կազմել է 144 361 (հարյուր քառասունչորս հազար երեք հարյուր վաթսունմեկ) դրամ, և

հիմք ընդունելով օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը, «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել՝
   1) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2003 թվականի դեկտեմբերի 22-ին «ԳԱՅՈՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախականությունների հատկացման №9/1-25 թույլտվությունը,
   2) հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 1-ի «ԳԱՅՈՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №9/1-25 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №467Ա որոշումը:

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականության օգտագործման №0837 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով 2018 թվականի դեկտեմբերի 27-ից մինչև 2019 թվականի մայիսի 8-ը հաշվարկված 144 361 (հարյուր քառասունչորս հազար երեք հարյուր վաթսունմեկ) դրամ պարտքը:

3. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
29 մայիսի 2019թ.